

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Նախարարի համանախագահության ներքո գործում են հետևյալ 4 միջկառավարական հանձնաժողովները (Հանձնաժողովները սկզբում գործել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության համանախագահությամբ, այնուհետև՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների, այնուհետև՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման)։

1. Տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական հարցերով հայ-իրաքյան համատեղ հանձնաժողով

Հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի **առաջին** նիստն անց է կացվել **2012թ. նոյեմբերի 6-9-ը Բաղդադում**, իսկ **երկրորդ** նիստը՝ **2013թ. նոյեմբերի 6-8-ը Երևանում**՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանի և Իրաքի Հանրապետության փոխվարչապետ Ռեոուշ Նուրի Շաուեյսի համանախագահությամբ: **Երրորդ** նիստը կայացել է **Բաղդադում՝ 2016թ. հունվարի 26-ին**՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի և Իրաքի Հանրապետության գյուղատնտեսության նախարար **Ֆայահ Զեյդանի** համանախագահությամբ: Տնտեսական, առևտրային, գիտական և տեխնիկական հարցերով հայ-իրաքյան համատեղ հանձնաժողովի **չորրորդ** նիստն անցկացվել է **Երևանում 2017թ. սեպտեմբերի 26-ին**՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար **Դավիթ Լոքյանի** և Իրաքի Հանրապետության գյուղատնտեսության նախարար **Ֆայահ Զեյդանի** համանախագահությամբ:

2. Տնտեսական և տեխնիկական համագործակցության հայ-քուվեյթյան միջկառավարական համատեղ հանձնաժողով

Տնտեսական և տեխնիկական համագործակցության հայ-քուվեյթական միջկառավարական հանձնաժողովի **առաջին** նիստն անց է կացվել **2011թ. հոկտեմբերի 5-ին Երևանում**՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար **Արմեն Գևորգյանի** և Քուվեյթի Պետության ֆինանսների նախարար Սուստաֆա Ջասեմ ալ Շամալիի համանախագահությամբ: **Երկրորդ** նիստն անց է կացվել **2015թ. դեկտեմբերի 17-ին՝ Քուվեյթում**՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար **Ա. Երիցյանի** և Քուվեյթի փոխվարչապետ, ֆինանսների նախարար, նավթի նախարարի պաշտոնակատար **Անաս Խալեդ ալ-Սալեհի** համանախագահությամբ:

Ներկայումս ընթանում են բանակցություններ հայ-քուվեյթյան միջկառավարական հանձնաժողովի հերթական նիստը ս.թ. աշնանը Երևանում կազմակերպելու շուրջ:

3. Տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողով

Հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի **առաջին** նիստը տեղի է ունեցել **1996թ. հունիսի 9-ին Երևանում, իսկ երկրորդ** նիստը՝ **1997թ. մայիսի 19-ին Կահիրեում**: Հայ-եգիպտական տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական համատեղ հանձնաժողովի **երրորդ** նիստը կայացել է **2002թ. հոկտեմբերի 19-ին Երևանում**: Տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի **չորրորդ** նիստն անցկացվել է **2005թ. դեկտեմբերի 7-ին Կահիրեում**՝ ՀՀ տարածքային կառավարման նախարար **Հովիկ Աբրահամյանի** և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջազգային համագործակցության նախարար **Ֆայզա Աբու Ալ Նազայի** համանախագահությամբ: Հայ-եգիպտական միջկառավարական համատեղ հանձնաժողովի **հինգերորդ** նիստը կայացել է **Երևանում 2017թ. սեպտեմբերի 29-ին**՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար

Դավիթ Լոքյանի և Եզիպտոսի Արաբական Հանրապետության ներդրումների և միջազգային համագործակցության նախարար Սահար Նասրի համանախագահությամբ:

4. Հայ-կատարական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով

Իրականացվել են պատվիրակությունների փոխադարձ այցելություններ, սակայն դեռևս որևէ նիստ չի գումարվել:

Բացի վերոնշյալ հանձնաժողովները համանախագահելուց, նախարարությունը ներկայացված է նաև հետևյալ միջկառավարական հանձնաժողովներում.

1. **Հայ-ռուսական** տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով
2. **Հայաստանի Հանրապետության և Վրաստանի** միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով
3. Տնտեսական համագործակցության հարցերով **հայ-ուկրաինական** միջկառավարական համատեղ հանձնաժողով
4. Տնտեսական համագործակցության հարցերով **հայ-բելառուսական** միջկառավարական համատեղ հանձնաժողով
5. Տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության **հայ-լատվիական** միջկառավարական հանձնաժողով
6. **Հայ-ամերիկյան** միջկառավարական հանձնաժողով
7. Ֆինանսական և տեխնիկական համագործակցության **հայ-գերմանական** միջկառավարական հանձնաժողով

8. **Հայ-ավստրիական** առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության միջկառավարական խառը հանձնաժողով
9. **Հայ-լեհական** տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով
10. Տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության հարցերով **հայ-բուլղարական** միջկառավարական հանձնաժողով
11. **Հայ-ռուսական** առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցության խառը հանձնաժողով
12. Առևտրատնտեսական համագործակցության հարցերով **հայ-չինական** համատեղ հանձնաժողով
13. Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական համատեղ հանձնաժողով
14. Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողով
15. **Հայ-չեխական** տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողով

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՆԻՍՏԵՐ

Հայ-ռուսական միջտարածաշրջանային համաժողովներն սկսել են անցկացվել *2011թ-*ից՝ *Հայաստանի մարզերի ու Ռուսաստանի ռեգիոնների* միջև տարբեր ուղղություններով համագործակցության խորացման ու զարգացման հարցերի քննարկման նպատակով: Երկու երկրների միջև միջտարածաշրջանային մակարդակով առկա է փոխգործակցության մեծ ներուժ, և

համաժողովները խնդիր ունեն նպաստել նաև այդ ներուժի բացահայտմանը, միջտարածաշրջանային մակարդակով գործակցության նոր ուղղությունների նախանշմանը, նոր կապերի հաստատմանը:

Համաժողովները կազմակերպվում են **ՀՀ Նախագահի** և **ՌԴ Նախագահի** աշխատակազմերի աջակցությամբ: Մասնակցում են բարձրաստիճան պաշտոնյաներ, պետական կառույցների ղեկավարներ, ՀՀ մարզերի և ՌԴ ռեզիդենտների ղեկավարներ, գործարարներ, փորձագետներ, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համաժողովի շրջանակում անցկացվում են տարբեր ոլորտներում փոխգործակցության հարցերին նվիրված թեմատիկ քննարկումներ՝ համապատասխան պետական մարմինների, տարածաշրջանների, գործարար ու փորձագիտական շրջանակների ներկայացուցիչների մասնակցությամբ: Քննարկումներն ամփոփվում և ներկայացվում են համապատասխան մարմիններին՝ հետագա քաղաքականությունը մշակելիս հաշվի առնելու համար:

Համաժողովների շրջանակում ավանդաբար կազմակերպվում է նաև ցուցահանդես՝ տարածաշրջանների ներուժն ու հնարավորությունները, ինչպես նաև առկա գործակցության արդյունքները ներկայացնելու նպատակով:

Առաջին համաժողովի արդյունքների ամփոփումից հետո՝ երկու երկրների միջև միջտարածաշրջանային կապերի ակտիվացման նպատակով **ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակում ձևավորվել է միջտարածաշրջանային համագործակցության հարցերը համակարգող աշխատանքային խումբ**՝ ՀՀ տարածքային կառավարման և ՌԴ տարածքային զարգացման փոխնախարարների համանախագահությամբ: Աշխատանքային խմբի խնդիրը միջտարածաշրջանային համագործակցության խորացման հետ կապված հարցերի քննարկումն ու կողմերին համապատասխան առաջարկությունների ներկայացումն է:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային առաջին համաժողով. անցկացվել է 2011թ. ապրիլի 18-19-ին Երևանում՝ «Հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում միջտարածաշրջանային համագործակցության նոր նվաճումներին ընդառաջ» խորագրով:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային երկրորդ համաժողով. անցկացվել է 2012թ. հոկտեմբերի 13-ին՝ «Հայաստան և Ռուսաստան. միջտարածաշրջանային երկխոսություն-2012» խորագրով:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային երրորդ համաժողով. անցկացվել է 2013թ. դեկտեմբերի 2-ին և 3-ին Գյումրիում և Երևանում՝ «Հայաստան: Ռուսաստան: Մաքսային միություն» խորագրով: Համաժողովի պլենար նիստին մասնակցեցին նաև ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը և ՌԴ Նախագահ Վ. Պուտինը:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային չորրորդ համաժողով. անցկացվել է 2015թ. նոյեմբերի 2-ին Երևանում՝ «Հայաստան-Ռուսաստան. Եվրասիական տնտեսական միություն. միջտարածաշրջանային համագործակցության նոր հեռանկարներ» խորագրով:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային չորրորդ համաժողովի շրջանակում անցկացվել է նաև *«Հայաստան – Ռուսաստան. ինտեգրման նոր դրայվերներ»* առաջին երիտասարդական տնտեսագիտական համաժողովը, որի հայկական կողմից կազմակերպիչ հանդես եկավ *«Հայ-Ռուսական Երիտասարդական Այլանք»*՝ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աջակցությամբ: Երիտասարդական համաժողովի նպատակն էր հաղորդակցման հարթակ ստեղծել Հայաստանի և Ռուսաստանի երիտասարդության և երիտասարդական կազմակերպությունների արդյունավետ համագործակցության համար: Հարթակի ստեղծումը կարևորվեց հատկապես նոր իրավիճակի՝ Եվրասիական տնտեսական միության պայմաններում, ինչպես նաև երիտասարդական ձեռներեցության, տեղեկատվական, գիտա-տեխնիկական և սոցիալ-տնտեսական նախագծերում երկու երկրների երիտասարդների փորձի փոխանակման տեսանկյունից:

Հայ-ռուսական միջտարածաշրջանային հինգերորդ համաժողով. անցկացվել է 2016 թվականի հոկտեմբերի 13-15-ը Երևանում:

Համաժողովի շրջանակներում ստորագրվեցին են հայ-ռուսական փոխգործակցությանն առնչվող փաստաթղթեր: Մասնավորապես, ՀՀ կառավարության և Ռոստովի նահանգի միջև ստորագրվեց առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում համագործակցության համաձայնագիր, ՀՀ Գեղարքունիքի մարզի և ՌԴ Օմսկի նահանգի կառավարության միջև ստորագրվեց առևտրատնտեսական, գիտատեխնիկական և սոցիալական ոլորտներում համագործակցության

համաձայնագիր, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Արթիկի և ՌԴ Ռոստովի մարզի Կրասնոսուլինսկ համայնքի միջև ստորագրվեց եղբայրական կապերի հաստատման վերաբերյալ համաձայնագիր:

Հինգերորդ համաժողովի շրջանակներում **2016 հոկտեմբերի 12-14-ը** կայացավ նաև հայ-ռուսական 2-րդ երիտասարդական «Ընդհանուր հայացք ապագային» խորագիրը կրող համաժողովը, որի հայկական կողմից կազմակերպիչ հանդես եկավ **«Հայ-Ռուսական Երիտասարդական Միությունը»**՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության համաձայնությամբ

Հայ-ռուսական միջտարածաշրջանային վեցերորդ համաժողով. անցկացվել է 2017 թվականի հոկտեմբերի 5-7-ը Երևանում: Համաժողովի շրջանակներում քննարկվեցին արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների և իննովացիոն ոլորտներում, ինչպես նաև զբոսաշրջության, գյուղատնտեսության, հումանիտար ոլորտներում երկկողմանի միջտարածաշրջանային համագործակցության զարգացմանը և ամրապնդմանը վերաբերող հարցերը: Համաժողովի շրջանակներում կայացավ նաև հայ-ռուսական 3-րդ երիտասարդական համաժողովը:

2012թ. մարտի 13-ին Գյումրիում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև **տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակում գործող միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի առաջին նիստը**՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի և ՌԴ տարածքային զարգացման նախարարի տեղակալ Մ.Տրավնիկովի համանախագահությամբ:

Աշխատանքային խմբի առաջին նիստի ընթացքում քննարկվել են միջտարածաշրջանային համագործակցության, իրավապայմանագրային բազայի զարգացման, բազմաբնակարան շենքերի կառավարման և կոմունալ տնտեսության ոլորտում փորձի փոխանակման ու համագործակցության, տարածքային համաչափ զարգացման ծրագրերի մշակման և իրականացման հարցում փորձի փոխանակման, հումանիտար ոլորտում գործակցության հարցեր:

Նիստի ավարտին Վ. Տերտերյանն ու Մ.Տրավնիկովը ստորագրեցին Միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի առաջին նիստի արձանագրությունը:

2013թ. դեկտեմբերի 1-ին Հայ-ռուսական միջտարածաշրջանային երրորդ համաժողովի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում անցկացվեց Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև **տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակում գործող միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի** երկրորդ նիստը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի և ՌԴ տարածքային զարգացման նախարարի տեղակալ Ս. Նազարովի համանախագահությամբ:

Նշված նիստի ընթացքում քննարկվել են երկու երկրների միջև միջտարածաշրջանային մակարդակով համագործակցության զարգացման հեռանկարներն ու ուղղությունները, այս մակարդակում իրավապայմանագրային դաշտի զարգացման հարցերը:

Նիստի ավարտին Վ. Տերտերյանն ու Ս. Նազարովը ստորագրեցին Միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի երկրորդ նիստի արձանագրությունը:

2015թ. ապրիլի 10-ին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունում տեղի ունեցավ **միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի երրորդ նիստը**՝ ՀՀ ՏԿԱԻ նախարարի առաջին տեղակալ **Վ. Տերտերյանի** և ՌԴ տնտեսական զարգացման նախարարի տեղակալ **Ալ. Ցիբուլսկու** համանախագահությամբ:

Նիստի ընթացքում քննարկվեցին երկու երկրների միջև միջտարածաշրջանային համագործակցությանը, տարբեր ոլորտներում կոնկրետ ծրագրերի իրագործման հնարավորություններին վերաբերող հարցեր: Գործընկեր տարածաշրջանների պատվիրակները ներկայացրեցին համագործակցության ներկա մակարդակի և գործակցության ընդլայնման հնարավորությունները:

Ներկաներն առաջարկություններ ներկայացրեցին միջտարածաշրջանային համագործակցության ընդլայնման ուղղությամբ, մասնավորապես՝ ՌԴ Կրասնոդարի, Ռոստովի, Վոլգոգրադի, Ստավրոպոլի տարածաշրջանների և Տավուշի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Լոռու մարզերի, Երևանի միջև նոր ոլորտներում համագործակցության վերաբերյալ:

Նիստի ավարտին **Վ. Տերտերյանն** ու **Ալ. Ցիբուլսկին** ստորագրեցին **Միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի երրորդ նիստի արձանագրությունը**:

2016թ. ապրիլի 19-ին Ռուսաստանի Դաշնության Դոնի Ռոստով քաղաքում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ **Վաչե Տերտերյանի** և ՌԴ տնտեսական զարգացման նախարարի տեղակալ **Ալեքսանդր Ցիբուլսկու** համանախագահությամբ տեղի է ունեցել **Հայ-ռուսական համատեղ աշխատանքային խմբի չորրորդ նիստը**: Երկու երկրների միջև

միջտարածաշրջանային համագործակցության զարգացման նպատակով ստեղծված աշխատանքային խումբը գործում է ՀՀ և ՌԴ միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակում:

Նիստի ընթացքում քննարկվել են միջտարածաշրջանային համագործակցության զարգացման հեռանկարներին ու ուղղություններին, իրավապայմանագրային բազայի զարգացմանն ու հումանիտար ոլորտում գործակցությանը, ինչպես նաև տարբեր ոլորտներում կոնկրետ ծրագրերի իրագործման հնարավորություններին վերաբերող հարցեր: Գործընկեր տարածաշրջանների պատվիրակները ներկայացրել են համագործակցության ընթացիկ վիճակը և գործակցության ընդլայնման հնարավորությունները:

Նիստի ավարտին Վաչե Տերտերյանն ու Ալեքսանդր Ցիբուլսկին ստորագրել են Միջտարածաշրջանային համագործակցության հարցերով հայ-ռուսական աշխատանքային խմբի չորրորդ նիստի արձանագրությունը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը սերտորեն համագործակցում է ԵՄ Տեղական և տարածքային ժողովրդավարության հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հետ:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը հանդիսանում է նաև ԱՊՀ անդամ-պետությունների միջտարածաշրջանային և մերձասահմանային համագործակցության հարցերով խորհրդի անդամ:

Նախարարության գործուն աջակցությամբ 2010թ. ՀՀ Տավուշի և Լոռու մարզերը դարձան Եվրոպական ռեգիոնների ասամբլեայի լիիրավ անդամ, իսկ Լոռու մարզը նաև՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ:

Նախարարությունն իր ակտիվ աջակցությունն է ցուցաբերում և մասնակցում նաև պարբերաբար կազմակերպվող հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության համաժողովներին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Միջազգային կազմակերպությունը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընթացիկ իրավիճակ	Պատասխանատու մարմիններ և ստորաբաժանում
<p align="center">Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)</p>	<p align="center">«Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագիր, սկիզբ՝ 2012թ.</p>	<p>1. Վարչատարածքային բարեփոխումներ բաղադրիչ.</p> <p>Ծրագիրը շարունակվում է իրականացվել:</p> <ul style="list-style-type: none"> • Տրամադրվել է օժանդակություն ՏԿԱԻՆ-ին՝ վարչատարածքային բարեփոխումների գործողությունների պլան մշակելու ուղղությամբ: • Տրամադրվել է օժանդակություն՝ վերանայելու վարչատարածքային բարեփոխումներին առնչվող երեք օրենքներ՝ Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենք, Վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենք, ընտրական օրենսգիրք: • Տրամադրվել է օժանդակություն ՏԿԱԻՆ-ին՝ գնահատելու ներքին ինստիտուցիոնալ կարողությունները, և տրամադրվել են առաջարկություններ կարողությունների զարգացման ուղղությամբ: • Տեղի է ունեցել հաղորդակցություն տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակներում, ինչպես 	<p align="center">Տեղական ինքնակառավարման վարչություն</p>

		<p>նաև լրատվամիջոցների և այլ շահառուների հետ:</p> <ul style="list-style-type: none"> • կազմակերպվել են հանդիպումներ համայնքների ղեկավարների հետ • կազմակերպվել են հանդիպումներ համայնքների ավագանիների հետ • կազմակերպվել են հանդիպումներ համայնքների բնակչության և աշխատակազմերի հետ • Պիլոտային 3 փնջերում՝ Թումանյանում, Դիլիջանում և Տաթևում իրականացվել է հանրաքվե և բոլոր երեքում գրանցվել են դրական արդյունքներ՝ 68, 73 և 94% համապատասխանաբար – 22 համայնք: • Իրականացվել են ուսումնասիրություններ 3 փնջերում, մասնավորապես՝ Թումանյան, Դիլիջա և Տաթև: Այս ուսումնասիրությունը նպատակ ունեն բացահայտելով համայնքների և որպես փնջի խնդիրները և ներուժը՝ առաջարկելու ծրագրեր այդ փնջերում իրականացնելու համար: Բոլոր առաջարկված ծրագրերը հատկորոշվել են համայնքների բնակչության հետ քննարկման արդյունքում: <p>2. Էլ-կառավարման համակարգ բաղադրիչ.</p> <ul style="list-style-type: none"> • Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում երեք պիլոտային փնջային համայնքներում իրականացվել է ներկա իրավիճակի և առկա ռեսուրսների գնահատում Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի (ՀՎՏՀ) ներդրման/կիրառման և Քաղաքացիների սպասարկման գրասենյակների ստեղծման/վերակազմավորման նպատակով, • Երեք պիլոտային փնջային համայնքներում իրականացվել է Քաղաքացիների սպասարկման գրասենյակների համար նախատեսված վերափոխվող/վերանորոգվող տարածքների, ինչպես նաև 18 համայնքներում համայնքապետարաններում սենյակների վերանորոգման պահանջների գնահատում, • Հայաստանում վարչատարածքային բարեփոխումների (ՀՎՏԲ) շրջանակներում 14 պիլոտային փնջային 	
--	--	---	--

		<p>համայնքներին ՀԿՏՀ համակարգի և համապատասխան համակարգչային տեխնիկայի տրամադրման, ինչպես նաև Թումանյանում և Շինուհայրում նոր ՔՍԳ-ների ստեղծման և Դիլիջանի ՔՍԳ-ի բարելավման նպատակով իրականացվել է համապատասխան ապարատային և ցանցային սարքավորումների գնում,</p> <ul style="list-style-type: none"> • Իրականացվել է գիտելիքի կառավարման մեկ հանդիպում ՀԿՏՀ կիրառող համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ: • Շինուհայրում և Թումանյանում Քաղաքացիների սպասարկման գրասենյակների ստեղծման գործընթացի խթանման նպատակով վերոնշյալ համայնքների ներկայացուցիչների համար կազմակերպվել է ուսումնական այց Դիլիջանի քաղաքացիների սպասարկման գրասենյակ ՝ ծանոթանալու գրասենյակի կառուցվածքին, մատուցվող ծառայություններին, գործընթացներին: 	
<p>Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)</p>	<p>«Կենսաբազմազանության և կայուն կառավարումը Հարավային Կովկասում» ծրագիր</p>	<ul style="list-style-type: none"> • Իրականացվել է ՀՀ-ի արոտավայրերի ընդհանուր տարածքի գնահատման և ճշգրտման աշխատանքները • Իրականացվել են անտառների և արոտավայրերի հրդեհների մոնիտորինգի մեթոդի մշակման և հրդեհված տարածքների գնահատման աշխատանքներ: 	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչություն</p>
<p>ԵՄ պատվիրակության հայաստանյան գրասենյակ</p>	<p>Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագիր, 1.35 մլն. եվրո (Հայաստանի և Վրաստանի, Ադրբեջանի և Վրաստանի,</p>	<p>Համատեղ Որոշումների Կայացման Հանձնաժողովի կողմից հաստատված «Հայաստան-Վրաստան համատեղ գործառնական ծրագիրը» իրականացնելու համար Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ) ընտրվել է որպես ծրագրի իրականացման գործակալություն: ԳՄՀԸ/GIZ-ի կողմից արդեն հայտարարվել է առաջին դրամաշնորհային մրցույթը, որը առաջարկում է անդրսահմանային (ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի և Վրաստանի Սամցխե – Ջավախեթի և Քվեմո-Քարթլի</p>	<p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ՀՀ Շիրակի, Լոռու և Տավուշի մարզեր, ՀՀ ՏԿԶՆ տեղական</p>

	<p>Բելառուսի և Ուկրաինայի, Մոնղոլիայի և Ուկրաինայի միջև)</p>	<p>տարածաշրջանների միջև) տեղական իշխանություններին, համայնքներին և քաղաքացիական հասարակությանը ներկայանցնել համատեղ անդրսահմանային ծրագրեր՝ աջակցելու մշակել համընդհանուր սոցիալ-տնտեսական մարտահրավերներին դիմակայելու համատեղ լուծումներ՝ Արևելյան Գործընկերության Տարածքային համագործակցության ծրագրի ֆինանսական աջակցության շրջանակում</p>	<p>ինքնակառավարման վարչություն</p>
<p>ԵՄ պատվիրակության հայաստանյան գրասենյակ</p>	<p>"Աջակցություն տարածքային կառավարման նախարարությանը՝ տարածքային զարգացման գործողությունների ծրագրեր մշակելու համար" ծրագիրը, որն իրականացում է հոլանդական ECORYS կազմակերպությունը</p>	<p>Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք ոչ միայն տարածքային զարգացման ռազմավարություն, մարզային զարգացման ծրագրերի բարեփոխված տարբերակներ, վիճակագրական բազաներ, այլ նաև տարածքային զարգացման փորձնական (հիմնականում ներդրումային) ծրագրերի իրականացման հնարավորություն:</p>	<p>ՀՀ ՏԿԶՆ տարածքային կառավարման և զարգացման վարչություն</p>
<p>ԵՄ պատվիրակության հայաստանյան գրասենյակ</p>	<p>«Տարածքային զարգացման պիլոտային ծրագիր»</p>	<p>Այս ծրագիրը ԵՄ նոր ֆինանսավորման գործիք է, որն իրականացվում է Արևելյան գործընկերության հինգ պետություններում: Ծրագրի հիմնական նպատակն է տարածքային անհամաչափությունների հաղթահարումն ու աղքատության նվազեցումը: Հատկանշական է, որ 2011 թվականին առաջարկվող ծրագրի գումարը սահմանվել էր 7.0 միլիոն եվրո, մինչդեռ, ըստ ԵՄ ընթացակարգերի, ցանկացած ԵՄ ծրագիր պարտադիր ունենում է տեխնիկական, մոնիտորինգի, վերահսկողության և թափանցիկությունն ապահովող միջոցառումների բաղադրիչ, ուստի, ծրագրի ամբողջականությունն ապահովելու համար ԵՄ-ն լրացուցիչ հատկացրել է ևս 3.0 միլիոն եվրո՝ ծրագրերի համար նախատեսված գումարն ավելի նպատակային և արդյունավետ օգտագործելու համար: Ծրագիրն ունի երկու կարևոր բաղադրիչ.</p>	<p>ՀՀ ՏԿԶՆ տարածքային կառավարման և զարգացման վարչություն</p>

		<p>1. Համապատասխան պետական և տարածաշրջանային կառույցների հմտությունների և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում/ առավելագույն արժեքը 3մլն եվրո/:</p> <p>Այս բաղադրիչի շրջանակներում հաստատվելու է ՀՀ տարածքային զարգացման ռազմավարությունն ու ծրագրերի իրականացման մեխանիզմները: Ինչպես նաև անհրաժեշտություն է առաջանալու մարզային և տարածաշրջանային վիճակագրությունը բարելավելու համար, այս առումով առաջարկում ենք պայմանագրի նախագիծը համաձայնացնել նաև ՀՀ ԱՎԾ հետ: Այս բաղադրիչով նախատեսված գործառույթները մանրամասն նշված են ԵՄ կից ներկայացրած ընթացակարգերում:</p> <p>2. Դրամաշնորհային տարածքային զարգացման ծրագրերի իրականացում՝ ըստ հաստատված ուղենիշերի՝ առավելագույն ԵՄ ֆինանսավորումը՝ 7.0 մլն եվրո</p>	
Ասիական զարգացման բանկ (ADB)	Կոշտ կենցաղային թափոնների կառավարման բարելավման ներդրումային/դրամաշնորհային ծրագրի խորհրդատվական ծառայությունների տեխնիկական առաջադրանք, 700.000 ԱՄՆ դոլար	<p>1-ին փուլում մշակվել է «Ռազմավարական զարգացման պլանը, ճանապարհային քարտեզը և երկարաժամկետ ներդրումային պլանը» զեկույցը, որը բանկը ներկայացրել է ՀՀ կառավարության հաստատմանը:</p> <p>2-րդ փուլում մշակվել է Գյումրի քաղաքը և հարակից տարածքները սպասարկող տարածաշրջանային աղբավայրի իրագործելիության ուսումնասիրություն և աղբավայրի (Բենիամին համայնքում) տեղադիրքի ընտրություն: Այժմ Քովի խորհրդատվական ընկերությունը մշակում է Գյումրու աղբահանության ֆինանսատնտեսական և նախագծային աշխատանքները:</p>	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն</p> <p>ՀՀ բնապահպանության նախարարություն</p> <p>ՀՀ ֆինանսների նախարարություն</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Տեղական ինքնակառավարման վարչություն</p>
Ասիական զարգացման բանկ (ADB)	«Հայաստանի 4/secondary/ քաղաքներում քաղաքային համայնքների	Ասիական զարգացման բանկը ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել Դիլիջանի, Գյումրու, Վանաձորի և Ջերմուկի քաղաքային համայնքների զարգացման ծրագրերը:	<p>ՀՀ քաղաքաշինության նախարարություն,</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,</p>

	<p>զարգացում» քաղաքականության մշակման և խորհրդատվության տեխնիկական աջակցություն, 739,200 ԱՄՆ դոլլար</p>		<p>ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչություն</p>
<p>Գերմանական զարգացման բանկ (KfW)</p>	<p>«Վանաձոր քաղաքի կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ» ծրագիր, 399.000 եվրո</p>	<p>Պայմանագրով ամրագրված էր, որ Խորհրդատուի կողմից մատուցված ծառայությունների արդյունքում նրան KfW պետք է վճարեր 399.00.00 եվրո, սակայն հաշվի առնելով, որ Ասիական զարգացման բանկի կողմից ՀՀ ամբողջ տարածքի կոշտ թափոնների կառավարման երկարաժամկետ ազգային ռազմավարությունը, ՀՀՏԿՆ կողմից առաջարկվել էր ծրագրի շրջանակներում դիտարկվի ոչ միայն Վանաձորը և շրջակա գյուղերը, այլ ամբողջ ՀՀ Լոռու մարզը և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքը, պայմանագրի արժեքը ժամկետները փոփոխվել են, որի արդյունքում ծրագրի արժեքն է 595.205,07 եվրո: Ծրագրի շրջանակներում ներկայացվել է «Տարբերակների գնահատման հաշվետվությունը», որում ներառված է ամբողջ Լոռու մարզը և ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքը: Իրականացվել է Տաշիրի տարածաշրջանում (Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր և Դիլիջան քաղաքներում) ծրագրի իրագործելիության ուսումնասիրության աշխատանքները:</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչություն</p>
<p>Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (EBRD)</p>	<p>«Կոտայքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» վարկային ծրագիր, 2-րդ փուլ, 11 մլն. եվրո</p>	<p>Ծրագրի նպատակն է կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան տարածաշրջանային աղբավայր Հրազդանում՝ Կոտայքի տարածաշրջանի 7 և Սևանի քաղաքային համայնքների աղբահանության համար:</p> <p>Ծրագրի շահառուներ՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի, Բյուրեղավանի, Եղվարդի, Ծաղկաձորի, Նոր Հաճընի, Հրազդանի, Չարենցավանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի համայնքներ:</p> <p>Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկությունների արդյունքում</p>	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ Կոտայքի մարզի քաղաքային համայնքներ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքային համայնք ՀՀ ՏԿԶՆ տեղական</p>

		<p>ՀՀ կառավարություն է ներկայացրել «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) վարկային, իրականացման և աջակցության համաձայնագրերի նախագծերի ստորագրման ենթակա տարբերակները:</p>	<p>ինքնակառավարման վարչություն</p>
<p>Ավստրիական զարգացման գործակալություն և Գերմանիայի միջազգային համագործակցության գործընկերություն</p>	<p>«Ինտեգրված էրոզիայի ռիսկի կառավարում» ծրագիր</p>	<p>Ծրագիրն իրականացվում է ՀՀ Շիրակի և Արագածոտնի մարզերի մի շարք համայնքներում: Շիրակի մարզից այս ծրագրում որպես պիլոտային համայնքներ ընդգրկվել են Սարալանջն ու Փոքր Մանթաշը: Նշված համայնքներում իրականացվել են հողային ռեսուրսների էրոզացվածության աստիճանի ուսումնասիրություններ, ինչպես նաև էրոզացված, դեգրադացված, գերարածեցված հողատարածքների քարտեզագրումներ: Համայնքի ղեկավարության, մարզպետարանի, տարածքային կառավարման նախարարության և այլ շահագրգիռ կազմակերպությունների, ինչպես նաև արտասահմանյան և տեղացի մասնագետների հետ համատեղ քննարկման արդյունքում որոշվել է էրոզիայի կանխարգելման նպատակով այդպիսի տարածքներում իրականացնել անտառտնկման աշխատանքներ: 2015թ. ընթացքում Շիրակի մարզի Սարալանջ համայնքում իրականացվել է շուրջ 9 հա անտառտնկման աշխատանքներ: Մինչ այդ տարածքն ամբողջությամբ ցանկապատվել է, ինչպես նաև լուծվել է ռոտզման ջրի հարցը: Անտառատառնկն իրականացվել է համայնքի բնակիչների անմիջական մասնակցությամբ: Տնկվել է սոճի, կեչի ծառատեսակներ, ինչպես նաև թփեր: Ծրագրի շնորհիվ համայնքում ստեղծվել է ավելի քան մեկ տասնյակ ժամանակավոր աշխատատեղեր: 2016թ. ընթացքում մոտավորապես 8-9 հա անտառ կտնկվի նաև Փոքր Մանթաշ համայնքում: Այստեղ բացի անտառտնկումից կիրականացվեն նաև էրոզիայի ռիսկերի կանխարգելման այլ աշխատանքներ /բիո-ինժեներական միջոցառումներ, բնական ռեսուրսների կառավարման պլանների մշակում և այլն/:</p> <p>Ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև փորձի և գիտելիքի փոխանակման միջոցառումներ: Այդ շրջանակներում Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչը և Սարալանջի համայնքապետը մեկնել են Գերմանիայի Դաշնային</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչություն</p>

		<p>հանրապետություն, որտեղ ուսումնասիրվել է անտառների, հատուկ պահպանվող տարածքների կայուն կառավարման հիմնախնդիրները: Նմանատիպ այցեր են նախատեսվում նաև Վրաստանի հանրապետություն:</p> <p>2015 թվականի սեպտեմբերի 26-ին Գյումրու Ավստրիական թաղամասի հարևանությամբ շահագործման հանձնվեց բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների «Էմիլի Արեգակ» ցերեկային խնամքի կենտրոնը: Կենտրոնի նպատակն է բարելավել հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների կյանքի որակը՝ հնարավորություն տալով հաշմանդամություն ունեցող երեխաներին ձեռք բերել անհրաժեշտ տարրական գիտելիքներ, լուծել նրանց ժամանցի հարցը՝ մատուցելով զարգացման ծառայություններ եւ կազմակերպելով արհեստագործական դասընթացներ: Ներկայումս կենտրոնում 40 երեխայի տրամադրվում են մի շարք վերականգնողական ծառայություններ՝ ֆիզիոթերապիա, արտթերապիա, երաժշտաթերապիա և այլն:</p> <p><u>ՀՀ Արագածոտնի մարզ</u></p> <p>ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Լուսազյուղ և Արայի համայնքների էռոզիացված հողերում կատարվում են անտառհիմնման աշխատանքներ: Արայի համայնքում հատկացվել է 50 հա հողատարածք, որից ցանկապատվել է 44 հեկտարը: Անտառ է հիմնվել 18 հա տարածության վրա:</p> <p>Լուսազյուղ համայնքում հիմնվել է 4 հա անտառ: 3000ք/մ –ի վրա հիմնվել է տնկարան:</p> <p>Քուչակ համայնքում անտառհիմնման համար ընտրվել է 40 հա տարածություն: Համայնքի հետ ակտիվ աշխատանք է տարվում բնակչության իրազեկության բարձրացման և ծրագրին նրանց մասնակցությունը ապահովելու համար:</p>	
<p>Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակ</p>	<p>«Անասնապահության զարգացումը Հայաստանի հարավում»</p>	<p>«Անասնապահության զարգացումը Հայաստանի հարավում» ծրագրի 1-ին փուլը (այն ժամանակ ծրագիրը կոչվում էր «Անասնապահության զարգացման ծրագիր Սյունիքի մարզում») սկսվել է 2006թ.: Ծրագիրը իրականացվում էր Գորիսի տարածաշրջանի գյուղական համայնքներում և ուղղված էր անասնաբուժական ծառայությունների հզորացմանը և կաթի</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ Սյունիքի մարզ ՀՀ ՏԿԶՆ</p>

		<p>շուկայի հասանելիության բարձրացմանը:</p> <p>Ծրագրի 2-րդ և 3-րդ փուլերի (2008 և 2011թթ.) ընթացքում ծրագրի աշխարհագրությունը, ինչպես նաև՝ բովանդակությունը ավելի ընդլայնվել են: Ծրագիրը իրականացվել է Միսիանի և Գորիսի տարածաշրջաններում, ավելի քան 40 գյուղական համայնքներում, և ուղղված է եղել անասնապահության ոլորտի բոլոր ծառայությունների զարգացմանը՝ անասնաբուժական, արհեստական սերմնավորման, կերի արտադրության, մեխանիզացիայի, ֆինանսական և այլն, ինչպես նաև՝ կաթի և մսի շուկաների հասանելիության բարձրացմանը:</p> <p>Ծրագրի 4-րդ փուլը սկսվել է 2014թ. սեպտեմբերին: Հաշվի առնելով ծրագրի գոհացուցիչ արդյունքները ծրագիրը ընդլայնվել է և իրականացվելու է Սյունիքի և Վայոց Ձորի ավելի քան 100 գյուղական համայնքներում: Ծրագրի նպատակն է գյուղական համայնքների բնակիչների եկամուտների ավելացումը անասնապահության ոլորտի հզորացման միջոցով: Ծրագրի տևողությունը՝ 2014թ. սեպտեմբերից – 2020 թ. օգոստոս ամիսն է: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 10 միլիոն շվեյցարական ֆրանկ:</p> <p>Ծրագիրը իրականացվում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» հասարակական կազմակերպության միջոցով:</p> <p>Ծրագրի նախորդ փուլերի համար Համաձայնագիր է ստորագրվել ՀՀ Տարածքային կառավարության նախարարության, Սյունիքի մարզպետարանի և Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության միջև:</p>	<p>տարածքային կառավարման և զարգացման վարչություն</p>
<p>Շվեյցարիայի զարգացման համագործակցության գրասենյակ (SDC)</p>	<p>«Գյուղական համայնքների զարգացումը Մեդրիի տարածաշրջանում»</p>	<p>Ծրագրի 1-ին փորձնական փուլը սկսվել է 2011թ. : Ծրագրի նպատակն է Մեդրիի տարածաշրջանի բոլոր գյուղական համայնքների կենսամակարդակի ավելացումը մրգի ոլորտի հզորացման միջոցով:</p>	<p>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ Սյունիքի մարզ</p> <p>ՀՀ ՏԿԶՆ</p>

		<p>Ծրագրի 2-րդ հիմնական փուլը սկսվել է 2014թ. հունիսին մինչև 2016 թ. դեկտեմբերի 15-ը: Ծրագրի բյուջեն կազմում է 2'209'000 շվեյցարական ֆրանկ: Ծրագիրը իրականացվում է Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման հիմնադրամի կողմից:</p>	<p>տարածքային կառավարման և զարգացման վարչություն</p>
<p>Շվեյցարիայի զարգացման համագործակցության գրասենյակ (SDC)</p>	<p>Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի բարելավում ծրագիր</p>	<p>Համայնքների խոշորացման կառավարության միտումների համատեքստում նախագծված՝ այս ծրագիրը տրամադրելու է տեխնիկական աջակցություն՝ կարողությունների ստեղծման և մասնագիտական գիտելիքների տեսքով՝ նպատակ ունենալով ամրապնդել տեղական ինքնակառավարման համակարգը և ապակենտրոնացումը: Ավելին, այն կօգնի բարելավել հանրային ծառայությունների մատուցումը և կհեշտացնի համայնքների հասանելիությունը տեղական և ռեգիոնալ զարգացմանը նպաստող կապիտալ ներդրումներին:</p> <p>Ծրագրի նախնական քառամյա (2014-2018) ժամանակաշրջանի ընթացքում նպատակն է ստեղծել կառավարման տեսանկյունից ավելի ուժեղ համայնքներ՝ բարձրացնելով քաղաքացիներին տրամադրվող հանրային ծառայությունների որակը և արդյունավետությունը: Այս ծրագրի այլ կարևոր բաղադրիչներն են՝ Հայաստանի Համայնքների Միության ուժեղացումը և կանանց դերի խթանումը քաղաքականությամբ ավելի ակտիվ գրառվելու:</p> <p>Ազգային մակարդակում ՇՀԶԳ-ն կաջակցի տեղական ինքնակառավարման ոլորտում բոլոր հիմնական շահագրգիռ կողմերի սերտ համագործակցությանը՝ միասնական ուժերով մշակելու ավելի արդյունավետ տեղական ինքնակառավարման համակարգին անհրաժեշտ քաղաքականությունը՝ արդյունքում խրախուսելով ապակենտրոնացման խորացումը:</p> <p>Համայնքային մակարդակում ծրագիրը մասնավորապես կկենտրոնանա Սյունիքի և Վայոց Ձորի երկու հարավային մարզերի վրա, որտեղ ՇՀԶԳ-ն երկար տարիներ աջակցել է տնտեսական զարգացմանը՝ կապված անասնապահության և մրգերի վերամշակման արժեքային շղթաների հետ:</p>	<p>Ծրագիրն իրականացվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գրասենյակի՝ SDC, Գերմանիայի միջազգային համագործակցության գրասենյակի՝ GIZ, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության՝ USAID, Միավորված ազգերի զարգացման ծրագրի՝ UNDP և ԵՖ հայաստանյան գրասենյակի՝ CoE կողմից:</p> <p>ՀՀ ՏԿԶՆ պատասխանատու ստորաբաժանումն է տեղական ինքնակառավարման վարչությունը:</p>
<p>ԵՖ Երևանյան գրասենյակ</p>	<p>Աջակցություն տեղական ժողովրդավարությանը ծրագիր</p>	<p>Ծրագրային ուղղություն I-ի շրջանակներում Եվրոպայի խորհրդի կողմից տրամադրվում է իրավական փորձաքննություն և խորհրդատվություն, ինչպես նաև աջակցություն նոր օրենսդրության նախապատրաստմանը՝ տեղական</p>	<p>ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչություն</p>

		<p>ժողովրդավարության համար կայուն ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմք ստեղծելու և օրենսդրությունն ու ոլորտի քաղաքականությունը եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով:</p> <p>Ծրագրային երկրորդ ուղղության շրջանակներում Ծրագրի քարտուղարությունը մեկնարկեց և հաջողությամբ անցկացրեց տեղական ինքնակառավարման ոլորտում ԵՄ առաջատար ծրագրերից մեկի՝ Լավագույն գործելակերպի ծրագրի առաջին շրջանը:</p> <p>Ծրագրային III ուղղության հիմնական նպատակներն են.</p> <ul style="list-style-type: none"> - Մեծացնել համայնքի ընտրված ներկայացուցիչների նկատմամբ վստահությունը՝ քաղաքական կառավարումը բարելավելու նպատակով: - Ամրապնդել համայնքի ընտրված ներկայացուցիչների առաջնորդությունը և սերմանել վստահություն նրանց նկատմամբ: - Ձևավորել ուղղահայաց ու հորիզոնական համագործակցության մթնոլորտ: - Օգնել փորձական համայնքներում հաջող մասնակցային ծրագրերի մշակման հարցում՝ քաղաքացիական ֆորումների միջոցով: 	
<p>ՄԱԿ-ի գարգացման ծրագրի (UNDP)</p>	<p>«Հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների խթանումը Հայաստանում. Կանայք տեղական ժողովրդավարական գործընթացներում»</p>	<p>Ծրագրի առանցքային նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետությունում կանանց առաջնորդության և զենդերային հավասարության առաջխաղացմանը՝ լայն գիտելիքներ և մեխանիզմներ տրամադրելով տեղական մակարդակում կանանց իրավունքների աստիճանական իրացման համար: Հայաստանի երկու մարզերում ծրագիրն իրականացնելու է հետևյալ գործունեությունը. ա) ամրապնդել կանանց կարողությունները որոշումների կայացման գործընթացում բովանդակային մասնակցության համար, ներառյալ 2016 թվականի տեղական ընտրությունները; բ) աջակցել վարչատարածքային</p>	<p>ՀՀ Վայոց ձորի և Սյունիքի մարզեր,</p> <p>ՀՀ ՏԿԶՆ տեղական ինքնակառավարման վարչություն</p>

		<p>բարեփոխումների իրականացմանը՝ հաշվի առնելով գենդերային զգայուն մոտեցումները:</p>	
<p>ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP)</p>	<p>Ինտեգրված աջակցություն գյուղական համայնքների զարգացմանը. Համայնքների դիմակայության ամրապնդում</p>	<p>«Ինտեգրված աջակցություն գյուղական համայնքների զարգացմանը. համայնքների դիմակայունության ամրապնդում» ծրագիրն իրականացվում է Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից և առաջիկա հինգ տարիների ընթացքում կիրականացվի ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ համայնքներում: Ծրագրի հիմնական նպատակն է ապահովել ՀՀ մարզերի զարգացումը ինտեգրված սոցիալ-տնտեսական մոտեցմամբ, ինչպես նաև բարձրացնել Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների բնակչության կենսամակարդակը և եկամուտները:</p> <p>Ծրագիրն ունի երեք հիմնական բաղադրիչ՝</p> <p>1. Զարգացման պլանավորում: Այս բաղադրիչը ներառում է 45 համայնքների մասնակցային ինտեգրված զարգացման պլանների մշակում՝ հաշվի առնելով զարգացման գործընթացի սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի պաշտպանության, ներառյալ աղետների ռիսկերի նվազեցում, հենասյունները:</p> <p>2. Համայնքի զարգացման կայունությանն ուղղված գործողություններ, մասնավորապես առաջնային գյուղատնտեսություն և ագրովերամշակում: Բաղադրիչը կներառի ոլորտային կարողությունների զարգացում, գյուղատնտեսական տեխնիկայի պարկերի հիմնում, ջերմատների կառուցում, փոքրածավալ ժամանակակից ագրովերամշակող ձեռնարկությունների հիմնում, այգիների հիմնադրում և բարելավում, հավաքման կենտրոնների հիմնում և այլն:</p> <p>3. Համայնքի զարգացման կայունությանն ուղղված գործողություններ, մասնավորապես, էներգախնայողություն, ջրային ռեսուրսների կայուն կառավարում, ենթակառուցվածքների հիմնանորոգում: Բաղադրիչը կներառի համայնքային ենթակառուցվածքների վերականգնում՝ հատկապես կարևորելով էներգախնայողությունը, ջրային ռեսուրսների խնայողության տեխնոլոգիաների ներդրումը, խմելու ջրի հասանելիությունը և այլն:</p> <p>Տավուշի մարզի 45 սահմանամերձ համայնքների 62,000 բնակիչները ուղղակի կամ անուղղակի կերպով կօգտվեն ծրագրի</p>	<p>ՀՀ ՏԿԶՆ տարածքային կառավարման և զարգացման վարչություն</p>

		արդյունքներից որակյալ ենթակառուցվածքների հասանելիության, գյուղատնտեսական մթերքների հավաքման կենտրոնների, գյուղատնտեսական տեխնիկայի պարկերի, ինչպես նաև գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտներում աշխատատեղերի ստեղծման միջոցով:	
--	--	--	--